ԱՐՁԱԳԱՆՔ

«ՁԵՆՔԻ ՎԱՃԱՌՔԸ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԱՆ ԲԱՁԱԼԻԱՆՎԻԼՈՒ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌՆՉԵԼԸ, ՉԳԻՏԵՄ, ԹԵ ԻՆՉ ՀԻՄԱՐ ՊԱՏՐԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔ Է»

Այս էլ որերորդ անգամ, Վրաստանում գործող առանձին քաղաքական ուժեր, առանձին լրատվամիջոցներ եւ դրանց թվում առաջնահերթ «Մթավարի» հեռուստաալիքը, իր «պարտքն» է համարում երկրում տեղ գտած փոքրիշատե «սկանդալային» իրադարձության մեջ փնտրել «հայկական հետք»: Նրանց մոտ հայատյացությունը այնքան խոր արմատներ է գցել, որ հերթական «սենսացիան» ներկայացնելիս, չեն էլ փորձում կամ ընդհանրապես չեն կարողանում դրան որոշակի տրամաբանական հիմնավորում տալ: Այդպես եղավ հուլիսին, երբ տխրահռչակ հեռուստաալիքը ողջ երկրով բարձրաձայնեց՝ Վրաստանի տարածքով Ռուսաստանից Հայաստան, զենքով բեռնված «կամազների» մասին: Այն ժամանակ դա ոչ մեկը լրջորեն չընդունեց: Այս անգամ իրենց մտահղացումն իրականացնելու համար՝ դիմեցին ակնհայտ ստորության՝ կրկին փորձ կատարվեց Վրաստանը ներքաշել երկրամասում շուրջ երեք տասնյակ տարիներ շարունակվող ղարաբաղյան հակամարտության մեջ:

Այս անգամ՝ որպես առիթ «Մթավարիականները» փորձեցին օգտագործել մի ընտանիքի ողբերգությունը:

Հիշեցնենք, որ դեռեւս հուլիսին, քառօրյա որոնումներից հետո, իր մեքենայում մեռած հայտնաբերվեց Վրաստանում գործող մասնավոր ընկերության ծրագրավորող Թամար Բաչալիաշվիլին: Ողբերգության հետաքննության ընթացքում ներկայացվեցին մի քանի վարկածներ: Եվ ահա, Թամարի ընտանիքի անդամները, կոնկրետ մայրը, «բարյացակամների» թելադրանքով, հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի՝ նա Ադրբեջանին եւ Թուրքիային կոչ էր անում հետաքրքրվել իրենց դստեր համակարգչի նյութերով, որտեղ, նրա հավաստմամբ, կային կոնկրետ փաստարկներ՝ Վրաստանի տարածքով Ղարաբաղ զենքի տեղափոխման սխեմաների մասին:

Ակնհայտ հորինված այս վարկածի դատապարտմամբ հանդես եկան Վրաստանի՝ ինչպես պաշտոնատար անձինք, այնպես էլ հանրության ներկայացուցիչներն ու լրատվամիջոցները: Մասնավորապես, «Սաքարթվելոս Ռեսպուբլիկա» թերթի սեպտեմբերի 1-2-ի համարում հրապարակվել է վերլուծաբան Ամիրան Սալուքվածեի ֆեյսբուքյան գրառումը:

«Այն, ինչ տեղի ունեցավ դատախազության շենքի մոտ, չգիտեմ՝ ինչպես մեկնաբանել: Մի կողմից ողբերգություն է, որը ցնցեց ողջ երկիրը, իսկ մյուս կողմից՝ մեծ սադրանքի փորձ:

Վրաստանը տարածաշրջանային հակամարտություններում որպես կողմ ներգրավելու հերթական սերիա: Չկարողացան ծավալել ժանգոտ «Կամազների» թեման, հիմա սկսեցին «արծարծել» Ղարաբաղին զենքով մատակարարելու թեման:

Այդ դժբախտ երեխային դեռ կապեցին պոռնոսայտերի հետ, իսկ հիմա շրջանառության մեջ են գցել զենքի վաճառքի թեման: Ակնհայտ է այն, որ ով այդ մասին խոսում է, չի գիտակցում թեմայի լրջությունը:

Սա արդեն կատակ չէ, եւ դատախազությունը դրան արձագանքելու է: Սա այն դեպքը չէ, երբ, այսպես կոչված, աղբյուրն իրավաբանորեն հնարավոր է թաքցնել: Ձեզանից ամեն ինչ սպասելի էր, սակայն զենքի վաճառքը եւ Ղարաբաղի թեման այս ողբերգության հետ առնչելը, չգիտեմ, թե ինչ հիմար պատրանքի արդյունք է»,- սոցիալական ցանցում գրառել է վերլուծաբան Ամիրան Սալուքվածեն:



ՌԵՅՆՋԵՐ՝ ԱՐՏԱՍՈՎՈՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՈՂՋ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՂՋԻԿ ՌԵՅՆՋԵՐԸ ՍԱԼՈՄԵՆ Է, ԻՍԿ ԵՐԿՐՈՐԴԸ՝ ՄԵՐ ԼՈՒՍՈՆ

2007 թվականին Միավորված ազգերի կազմակերպությունը սահմանեց անտառապահի՝ Ռեյնջերի միջազգային օր: Եվ ահա, 13 տարի համաշխարհային հանրությունը իր երախտագիտությունն է հայտնում այն մարդկանց, ովքեր անձնուրացությամբ ու համարձակությամբ պաշտպանում են բնական ժառանգությունը:

Վրաստանում ռեյնջերական շարժումը շատ ավելի խոր արմատներ ունի, քան կարելի է պատկերացնել: Մասնավորապես, միջնադարյան Վրաստանում հայտնի են դեպքեր, երբ անտառապահները (այսօր նրանց կոչում են ռեյնջերներ), առաջինն էին, որոնք իշխանություններին տեղեկացնում էին օտար ներխուժումների մասին, դառնում ուղեկցորդ ճանապարհորդների համար...: Ուրախալի է, որ այսօր այդ ռեյնջերների թվում շարունակում են գործել իրենց պարտականություններին հավատարիմ շատ անձինք, այդ թվում՝ նաեւ երիտասարդ աղջիկներ:

Մի քանի ամիս առաջ, մեր թերթում պատմեցինք ծնունդով Թեթրիծղարոյի մունիցիպալիտետի Դաղեթ-Խաչեն գյուղից Լուսինե Դոստիբեգյանի՝ Ալգեթիի պաշտպանված տարածքի ռեյնջերի մասին, իսկ հիմա Լուսինեի հետ միասին ցանկանում ենք ձեր ուշադրությանը ներկայացնել Վրաստանում առաջին կին ռեյնջերի, Կովկասյան լեռնաշղթայի ստորոտում, Թուշեթիում ծնված եւ հենց հարազատ երկրամասի պաշտպանված տարածքի ռեյնջեր Սալոմե Իդոիձեի հետ մեր կարճատեւ հեռախոսազրույցները:

Սալոմե Իդոիձեն

- Սալոմե, ինչպե՞ս դարձաք ռեյնջեր:

- Ծագումով թուշ եմ եւ ամառները, իհարկե, անց էի կացնում հարազատ օրրանում: Շատ արշավների եմ մասնակցել, հետեւաբար, լավ ծանոթ եմ տեղանքին, զբոսաշրջիկների կամ տեղացիների կողմից անցկացված արահետներին: Մանկուց արտառոց վերաբերմունք ունեմ բնության ու կենդանիների հանդեպ: Մանկուց տուն էի բերում անտուն կենդանիների եւ՝ խնամում: Երբ ավարտեցի համալսարանի երկրորդ կուրսը, եկա «Թուշեթիի պաշտպանված տարածքների բարեկամների ասոցիացիա» էկոճամբար, որտեղ առավել մանրամասն ծանոթացա պաշտպանված տարածքների նշանակությանը: Ծանոթացա ռեյնջերների հետ, ինձ գրավեց նրանց աշխատանքը: Էկոճամբարից հետո ծագեց ռեյնջեր դառնալու ցանկությունը, եւ երբ տեղեկացա, որ Թուշեթիի ազգային զբոսայգում ռեյնջերի թափուր տեղ է հայտարարվել, առանց երկար մտածելու, ներկայացրի իմ թեկնածությունն ու ընդունվեցի աշխատանքի: Այսպիսով, ես՝ Սալոմե Իդոիձեն, դարձա Վրաստանում առաջին կին ռեյնջերը, եւ մինչ օրս աշխատում եմ Թուշեթիի ազգային զբոսայգու Պիրիքիթիի տարածքում: Քսան տարեկան էի, երբ դարձա ռեյնջեր եւ, ահա ինը տարի է՝ կանգնած եմ բնության պաշտպանության առաջնագծում,- մեզ հետ զրույցում ասաց Սալոմե Իդոիձեն:

- Լուսինե, իսկ Դուք ի՞նչ կասեիք «Վրաստանի» ընթերցողներին, ինչի՞ց ելնելով ընտրեցիք ռեյնջերի մասնագիտությունը:

Լուսինե Դոստիբեգյանը

- Դեռ Թեթրիծղարոյի դպրոցի բարձր դասարանցի էի, երբ կարդացի Վրաստանի առաջին աղջիկ ռեյնջեր՝ Սալոմե Իդոիձեի մասին: Եվ այն ժամանակ մտածեցի, որ հետաքրքիր կլիներ, որ ես էլ դառնամ ռեյնջեր: Ռեյնջերի աշխատանքը նախատեսում է տարածքների պաշտպանություն եւ այդ տարածքների պարեկություն, մաքսագողերի հայտնաբերում, երիտասարդների շրջանում էկոհանրակրթական ակտիվությունների իրականացում եւ պաշտպանված տարածքների մոտակայքում ապրող տեղացիների հետ մշտական հաղորդակցության հաստատում, որպեսզի է'լ ավելի բարձրացվի այդ տարածքների նշանակությունը, որպեսզի հստակ գիտակցեն այն կանոնները, որոնք տարածվում են պաշտպանված տարածքների վրա:

Այդ առումով հաճախ եմ լինում իմ պապական Դաղեթում, հայաբնակ Սամշվիլդեում, Դուռնուկում եւ Սամղրեթիում:

Ռեյնջերի մասնագիտությունը աշխատատար է, պատասխանատու եւ հետաքրքիր: Նման առօրյա կյանքը, աշխատանքային յուրաքանչյուր օր տարբերվում է: Հետեւում եմ թռչուններին, կենդանիներին, բնության առօրյա փոփոխություններին եւ նաեւ նրան, թե որքանով գեղեցիկ ու հավասարակշռված է մեր շրջակա բնությունը, երբ մարդիկ չեն միջամտում դրա ընթացքին,- ասաց Լուսինե Դոստիբեգյանը:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ԹԵԱ ԱԽՎԼԵԴԻԱՆԻ. «ՄԵՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱՆ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԿՅԱՆՔՈՎ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Պետնախարարը հանդիպում ունեցավ անջատողականների կողմից առեւանգված մարդկանց ընտանիքների անդամների հետ:

- Բռնազավթված գծի շուրջ ծանր իրավիճակի հետ այսօր ծանոթացել եմ՝ Գուգութիանթկարի, Խուրվալեթ եւ Օձիսի գյուղերում, որտեղ հանդիպել եմ տեղի բնակչությանը, եւ նրանց հետ քննարկել ծառացած մարտահրավերները լուծելու ուղիներն ու միջոցները:

Այսօր, Օձիսիից, ես կցանկանայի արձագանքել բռնազավթված Ցխինվալիում տիրող ծանր իրավիճակին՝ մարդասիրական եւ մարդու իրավունքների խախտումների տեսանկյունից: Արդեն մեկ տարի է, ինչ փակ է Ախալգորիի, այսպես կոչված, անցակետը, որը մեր բնակչությանը է'լ ավելի ծանր պայմանների առջեւ է կանգնեցնում: Ես մեկ անգամ եւս կոչ եմ անում միջազգային հանրությանը եւ մեր գործընկերներին՝ օգտագործել նրանց հասանելի բոլոր հնարավորությունները, որպեսզի ավարտվի այս ռեժիմը եւ մեր քաղաքացիներին տրվի արժանապատիվ կյանք վարելու իրավունք,- ասաց Թեա Ախվլեդիանին:

COVID-19

ԷԿԱՏԵՐԻՆԵ ՏԻԿԱՐԱՁԵ. «ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ԵՎ ԿՈՎԻԴԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄՅՈՒՍ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՉԵՆՔ ԴԻՄԻ ԾԱՅՐԱՀԵՂ ՔԱՅԼԵՐԻ»

Վրաստանի առողջապահության նախարար էկատերինե Տիկարաձեն, արձագանքելով կորոնավարակի դեպքերի ավելացման փաստին, քաղաքացիներին կոչ արեց՝ տուն վերադարձող բոլորին՝ Թբիլիսի, թե այլ վայր, ինքնամեկուսացվել եւ ախտանիշների դեպքում զանգահարել՝ 112, պահպանել սոցիալական հեռավորություն եւ կրել բժշկական դիմակ:

- Սեպտեմբերի 1-ին արձանագրվել է կորոնավիրուսի 38 դեպք, որից 22-ը գրանցվել է Բաթումիում: Ցանկանում եմ խնդրել մեր ժողովրդին՝ նույն պատասխանատվությամբ մոտենալ այս հարցին, ինչպիսի պատասխանատվությամբ նրանք մոտեցել են ողջ տարվա ընթացքում, պաշտպանել սոցիալական հեռավորություն, կրել բժշկական դիմակներ եւ, իհարկե, կոչ եմ անում Բաթումիում եւ Աջարիայում գտնվող մեր քաղաքացիներին, ովքեր այժմ իրենց արձակուրդն են անցկացնում այնտեղ, դիմել քաղաքում բացված հատուկ կետերի, որտեղ կա փորձարկման հնարավորություն: Դրանով մենք կօգնենք համավարակաբաններին եւ կնվազեցնենք երկրում վարակի շղթայի տարածումը: Ցանկանում եմ կոչ անել մեր քաղաքացիներին՝ ով վերադառնում է տուն, կլինի դա Թբիլիսի, թե այլ վայր, դիմել ինքնամեկուսացման եւ ախտանիշների առաջացման դեպքում զանգահարել՝ 112: Սա շատ կարեւոր է եւ կօգնի մեզ չդիմել ծայրահեղ քայլերի: Գտնում եմ, որ, յուրաքանչյուր քաղաքացու համար, հատկապես տնտեսական գործունեություն իրականացնող անձանց, դա շատ կարեւոր է,- հայտարարեց էկատերինե Տիկարաձեն:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. 26 ՄԻԼԻՈՆԻՑ ԱՎԵԼԻ ՎԱՐԱԿՎԱԾ, 18 ՈՒ ԿԵՍ ՄԻԼԻՈՆԻՑ ԱՎԵԼԻ ԱՊԱՔԻՆՎԱԾ

Աշխարհում COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն անցել է 26 486 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 873 470 հազարը: Ապաքինվել է 18 միլիոն 674 844 մարդ:

Վիրուսով վարակվածների թվով առաջին տեղում գտնվող **ԱՄՆ-ում 6 335 244** հաստատված դեպք կա: Այստեղ մահացածների թիվը **191 058** է: Այս ցուցանիշով ԱՄՆ-ն առաջինն է աշխարհում: Երկրորդ տեղում **Բրազիլիան է**, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **4 046 150-ի**, մահացածներինը՝ **124 729-ի:**

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Հնդկաստանն է**, որտեղ վարակվել է **3 936 747**, մահացել՝ **68 569** մարդ: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **1 015 105**, վարակի հետեւանքով մահացել՝ **17 649** մարդ:

Պերուում վարակվել է **670 145**, վարակի հետեւանքով մահացել՝ **29 405** մարդ: **Կոլումբիայում** վարակվել է **641 574**, վարակի հետեւանքով մահացել՝ **20 618** մարդ: Կոլումբիային հաջորդում են Հարավային Աֆրիկան, Մեքսիկան, Իսպանիան եւ Արգենտինան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **44 461**-ի, մահացածներինը՝ **891**-ի, ապաքինվածներինը՝ **39 257**-ի:

Աղրբեջանում վարակվածների թիվը կազմում է **36 899** մարդ: Վարակից մահացել է **541**, ապաքինվել՝ **34 264** մարդ:

Սեպտեմբերի 4-ի տվյալներով, **Վրաստանում** վարակվել է **1 596,** մահացել՝ **19**, ապաքինվել՝ **1294** մարդ:

ՉՆԱՅԱԾ ՎԱՐԱԿՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՃԻՆ, ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՎՏԱՆԳ ՉԿԱ

Սեպտեմբերի 2-ին, միջգերատեսչական համակարգող խորհրդի նիստում, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան անդրադարձավ սեպտեմբերի 1-ին Վրաստանում, մասնավորապես Բաթումիում, կովիդով վարակման աննախադեպ 38 դեպքերի հաստատմանը եւ հայտարարեց, որ չնայած դրան, համավարակի լայնածավալ տարածման վտանգ չկա:

- Չնայած նրան, որ Բաթումիում համավարակային իրավիճակը, կարծես թե Վրաստանի մնացած շրջանների համեմատ, ծանր է, մենք Բաթումիում չենք նախատեսում ընդունել հատուկ կարանտինային պայմաններ եւ քաղաքի փակման մասին խոսք չի գնում,- ասաց Գիորգի Գախարիան:

Նրա խոսքով՝ Բաթումիում արձանագրված դեպքերից 22-ը կապված են սննդի օբյեկտների հետ:

- Այսօր Բաթումիում կենտրոնացած են բավական մեծ թվով քաղաքացիներ, ովքեր հանգստանում են, ուստի հետազոտությունների ծավալը մեծ է,- ասաց վարչապետը՝ հավելելով, որ, չնայած վարակման դեպքերի ավելացմանը, դպրոցներում ուսումնական գործընթացը պետք է սկսվի սեպտեմբերի 15-ին, եւ դրա համար պետք է պատրաստ լինեն կրթության եւ առողջապահության նախարարությունները: Վարչապետը համապատասխան ծառայություններին կոչ արեց՝ խստացնել անվտանգության միջոցառումները:

Միջգերատեսչական համակարգող խորհրդի նիստում՝ Վրաստանի առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման եւ հասարակական առողջապահության ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն հայտարարեց, որ, չնայած վարակի դեպքերի ավելացմանը, երկրում համավարակաբանական իրավիճակը լիովին վերահսկվում է, եւ այս փուլում ավելի մեծ համավարակի վտանգ չկա: Ամիրան Գամղրելիձեն նշեց նաեւ, որ բնակչությունը հանդարտվել է եւ չի պահպանում վարակից պաշտպանվելու հիմնական չափանիշները:

Վարչապետը կրկին բնակչությանը կոչ արեց պահպանել զգուշություն, առողջապահության նախարարության կողմից տրված հանձնարարականները: Նրա խոսքով, ամենայն հավանականությամբ, ստիպված կլինեն կրկին խստացնել դիմակներ չկրելու, սոցիալական հեռավորության խախտման եւ այլ հանձնարարականների անտեսման համար նախատեսված պատժամիջոցները:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

10 ՍՊԱՍԱՐԿՈՒՄ, ՈՐԸ TBC ԲԱՆԿՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ

TBC կոնցեպտի նոր հիմնադրույթը, անհատական բանկային սպասարկման գործում, որը սպառողներին ընձեռում է սպասարկման ցանկալի հավաքածուի ընտրության իրավունք, ներդրվեց: TBC կոնցեպտի նպատակն է՝ անհատականորեն, առավել շատ մարդկանց համար ստեղծել մատչելի բարձրորակ սպասարկում, որը կհամապատասխանի նրանց ցանկություններին եւ կենսաձեւին:

Այսպիսով, TBC կոնցեպտը սպառողներին առաջարկում է սպասարկման տասը ուղղություն:

1.Subscription մոդել

Դուրսգրման, այսինքն՝ Subscription մոդելով, TBC-ն սպառողներին ընձեռում է ընտրության հնարավորություն՝ ինքնուրույն որոշել, թե ինչ է անհրաժեշտ եւ, ելնելով դրանից, ստանալ սպասարկումների ցանկալի հավաքածուն:

2.Անհատականացված մոտեցում

TBC կոնցեպտի միջոցով, յուրաքանչյուր սպառող հնարավորություն ունի հայտնաբերել իր կարիքներից կամ նպատակներից բխող կոնցեպտը, եւ դա չի սահմանափակի նրա եկամուտները:

3.Թվային հավաքածու

Առաջին անգամ Վրաստանում TBC-ն հիմնեց անհատական թվային բանկային սպասարկման հավաքածու: TBC կոնցեպտի թվային հավաքածուն նախատեսված է նրանց համար, ում համար բանկային սպասարկումներից օգտվելը առօրյա երեւույթ է, եւ ովքեր ակտիվորեն օգտագործում են ոչ բանկային սպասարկումներն ու առաջարկությունները:

4.Արհեստավարժ բանկիր

TBC կոնցեպտի՝ սպառողների հետ հարաբերությունների երկրորդ ձեւաչափը իրականացվում է պրեմիում հավաքածուի ներկայացմամբ, որտեղ ձեր հուսալի գործընկերը, անփոխարինելի օգնականն ու խորհրդականն անձնական բանկիրն է: Նրա գլխավոր խնդիրն է՝ դյուրացնել սպառողների ապրելաձեւը:

5.Տարբեր գերակայություններով բարձր դասի քարտեր

TBC կոնցեպտով սպառողներն օգտվում են տարբեր գերակայություններից: Մասնավորապես, նա ունի գումարի կանխիկացման առավել բարձր լիմիտ, քարտի վրա դրական մնացորդի դեպքում՝ ավելանում է հավելավճարը: Նաեւ՝ սպառողների համար մատչելի են միջազգային առաջարկությունները:

6.Բարելավված պայմաններ բանկային գործողությունների ժամանակ

TBC կոնցեպտը, բարձր դասի քարտերից բացի, սպառողներին առաջարկում է նաեւ բանկային եւ ապահովագրական սպասարկման առանձնակի պայմաններ: Դրանց միջոցով հնարավոր է առավել մեծ հավելավճար ստանալ՝ հաշվեհամարի վրա գումարի փոխանցման կամ կանխիկացման ժամանակ, արտաքին փոխանցումների համար սահմանված է նվազ տոկոսադրույք, կարելի է առանց լիմիտի օգտվել բանկային ցրիչի սպասարկումից, է'լ ավելի է դյուրացվում քաղվածքների եւ այլ փաստաթղթերի ստացումը, 24/7-ով մատչելի է դառնում հեռավար սպասարկման թիմը, հնարավոր է օգտվել մեյիլ բանկի սպասարկումից եւ, ամենակարեւորը, 14-օրյա ճանապարհորդական ապահովագրությունից եւ 10 տոկոսի ավտոապահովագրությունից:

7.Կոնցեպտ ասիստենտի սպասարկում

TBC կոնցեպտից օգտվելիս՝ սպառողին կտրվի կոնցեպտ ասիստենտ, ով պարբերաբար կօգնի ամրագրման, տարբեր միջոցառումներին կամ հասարակական տոմսակների ձեռքբերման գործում եւ սպասարկումը ներկայացնելիս՝ առօրյա կհոգա այնպիսի մանրամասների հարցով, որոնց համար չի պահանջվի երկար ժամանակ եւ էներգիայի վատնում:

8.Միջազգային օդանավակայանների լաունջենից օգտվելը

TBC կոնցեպտի սպառողներին տրվում է LoungeKey ծրագրից օգտվելու հնարավորություն, որի միջոցով հազարից ավելի օդանավակայաններում, առանց լրացուցիչ անդամատոմսի ներկայացման, հնարավոր է օգտվել լաունջենի սպասարկումից: Բացի այդ, ինքնաթիռ նստելուց առաջ, հերթում կանգնելու փոխարեն, կոնցեպտի սպառողը կարող է օգտվել առաջնահերթային ելքից:

9.Հատուկ առաջարկություններ

TBC կոնցեպտի սպառողներին տրվում է սպասարկումների անընդմեջ նորացման առաջարկություն, որոնք հարմարեցվում են արդի կենսաձեւին եւ նախատեսում է՝ ամենամեծ պահանջարկ վայելող օբյեկտներում, արտոնյալ պայմաններում տարբեր ապրանքներ եւ սպասարկումներ ստանալու հնարավորություն:

10.Կոնցեպտ հանդիպումներ եւ մաստեր դասեր

TBC կոնցեպտը չի հանդիսանում միայն բանկային ֆինանսական սպասարկում: Այն ուղղված է նաեւ սպասարկողների ինքնազարգացման նպաստմանը: Հանրակրթական հարթակի՝ կոնցեպտ հանդիպումների շրջանակներում՝ տարբեր ոլորտներում հաջողության հասած անձինք, սպառողների հետ կկիսվեն իրենց փորձով ու գաղափարներով, կխոսեն այն թեմաների շուրջ, որոնք միանման նշանակալից են՝ ինչպես աշխատանքային, այնպես էլ առօրյա հարաբերություններում:

TBC կոնցեպտի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար՝ սպառողը պետք է կապվի անձնական բանկիրի կամ կոնցեպտ կենտրոնի (032 27 27 00) հետ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԿԱՐԱՆՏԻՆ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Կարանտին հնարավոր է սահմանել առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի առաջարկությամբ, մարզպետի կամ Երեւանի քաղաքապետի կողմից եւ կառավարության կողմից տարբեր տարածքներում:

Եթե օրենսդրական փաթեթի փոփոխություններն ընդունվեն մինչեւ սեպտեմբերի 11-ը, ապա արտակարգ դրությունն այլեւս չի երկարաձգվի, իսկ դրա ավարտից հետո կսկսեն գործել նախագծերով առաջարկվող միջոցառումները:

Հիշեցնենք, որ Հայաստանի կառավարությունը օգոստոսի 12-ին որոշում է կայացրել Հայաստանում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված եւ մինչեւ օգոստոսի 12-ը երկարաձգված արտակարգ դրության ժամկետը օգոստոսի 12-ից երկարաձգել եւս 30 օրով՝ մինչեւ սեպտեմբերի 11-ը:

50 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄԻ ԱՌԱՋԻՆ ՉԱՓԱՔԱՆԱԿԸ՝ ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի կառավարության սեպտեմբերի 4-ի նիստում նշվեց, որ գործադիրն այս տարվա մայիսի 21-ի նիստում հայտարարել էր տնտեսական երկարաժամկետ զարգացմանն ուղղված մի նոր ծրագրի մեկնարկի մասին, որը կառավարության կողմից իրականացվելիք ամենածավալուն հակաճգնաժամային ծրագրերից մեկն է:

Դրա շրջանակում պետությունն իր պատրաստակամությունն է հայտնել՝ մինչեւ 50 մլրդ դրամի ներդրումների միջոցով աջակցել մասնավոր հատվածի այն ներդրումային նախաձեռնություններին, որոնք, առանց կառավարության աջակցության, դժվարություններ կունենային մեկնարկի եւ առաջնթացի հարցում:

Ընդհանուր առմամբ, ծրագրի տրամաբանությունն այն է, որ պետությունը առավելագույնը ֆինանսավորում է ծրագրի 25 տոկոսը, մյուս 25 տոկոսը ֆինանսավորվում է ներդրողի կողմից, իսկ 50 տոկոսը՝ ֆինանսական կազմակերպությունների:

ԴԱՎԻԹ ՏՈՆՈՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԱՊՀ, ՇԿՀ ԵՎ ՀԱՊՀ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏԻՆ

Սեպտեմբերի 4-ին, Հայաստանի պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը, Մոսկվայում, մասնակցել է ԱՊՀ, Շանհայան համագործակցության կազմակերպության /ՇՀԿ/ եւ ՀԱՊԿ անդամ պետությունների պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների համատեղ նիստին:

ՌԴ ՊՆ մասնագետները պաշտպանական գերատեսչությունների ղեկավարներին ներկայացրել են կորոնավարակի դեմ աշխարհում առաջինը գրանցված ռուսական պատվաստանյութի մշակման եւ փորձարկման մանրամասներ:

Նիստի մասնակիցներն այցելել են նաեւ մերձմոսկովյան ՌԴ ԶՈՒ Գլխավոր տաճար եւ «Հիշողության ճանապարհ» թանգարանային համալիր:

Դավիթ Տոնոյանը «Հիշողության ճանապարհ» համալիրի ինտերակտիվ որոնման համակարգի միջոցով գտել է Հայրենական մեծ պատերազմի մասնակից պապի՝ Հովհաննես Պողոսի Հակոբովի մասին փաստեր:

«Հիշողության ճանապարհ» թանգարանային համալիրը ստեղծվել է Հայրենական մեծ պատերազմի մասնակից խորհրդային զինվորների հիշատակը հավերժացնելու նպատակով: Այժմ այն ներառում է 33 միլիոն գրառում եւ լուսանկար:

Նիստի շրջանակում ստորագրվել են ԱՊՀ եւ ՀԱՊԿ շրջանակներում մի շարք փաստաթղթեր:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սեպտեմբերի 1-ին մեկնարկեց Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի «iԳործ» սփյուռքահայ մասնագետների ծրագիրը: Առաջին փուլով 24 մասնագետներ Վրաստանից, Ռուսաստանից, Կանադայից, Դանիայից, Լիբանանից, Ֆրանսիայից, Նորվեգիայից մինչեւ Իսրայել, Նիդերլանդներ ու Չինաստան, արդեն Հայաստանում են:

Առաջին փուլի մասնակիցներն աշխատանքի են անցել վարչապետի աշխատակազմում, Առողջապահության, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի, Շրջակա միջավայրի, Արդարադատության, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների, Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի, էկոնոմիկայի նախարարություններում, Կենտրոնական բանկում, Կրթության տեսչական մարմնում, Մարդու իրավունքների պաշտպանի, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակներում:

Ծրագրի առաջին փուլի մասնակիցներին ընդունել եւ բարի գալուստ է մաղթել Գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը:

Այնուհետ «iԳործ»-ցիներին ներկայացվել են աշխատանքի ժամանակացույցը եւ պարտականությունները:

COVID-19-ով եւ օդային սահմանափակ հաղորդակցությամբ պայմանավորված՝ ծրագրի մյուս մասնակիցները Հայաստան կժամանեն մի փոքր ավելի ուշ:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՅՔԸ

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը, ֆեյսբուքի ուղիղ եթերում ներկայացրեց իր գլխավորած գրասենյակի նորաստեղծ կայքը:

Սինանյանը նշեց, որ կայքի միջոցով արել եւ անելու են ամեն բան, որ օգտակար, մատչելի եւ հասանելի տեղեկատվություն հասցնեն ոչ միայն գրասենյակի գործունեության, այլեւ տեղեկատվություն՝ սփյուռքահայության, հայրենադարձվել ցանկացողների համար:

- Փորձել ենք ներգրավել նաեւ որոշ նորարարական մոտեցումներ, օրինակ, մեր կայքը մեր պետական կառավարման համակարգում միակն է, որն ընձեռում է նամակագրության հնարավորություն: Կարող են հարցերը գրել, եւ մենք հնարավորինս կարճ ժամկետում օնլայն ռեժիմով կպատասխանենք,- ասաց նա՝ ավելացնելով, որ կայքը եռալեզու է՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն, իսկ առաջիկայում հնարավոր է՝ այլ լեզուներով եւս հասանելի լինի:

Կայքում առկա է նաեւ քարտեզ, որում ներկայացված են սփյուռքի բոլոր խոշոր համայնքները՝ ինֆորմացիա մոտ 80 համայնքի մասին:

ՌԵԱԿՏՈՐԻ ԹՐԾՄԱՆ ԿԱՅԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Է

Հայկական ԱԷԿ-ի ռեակտորի ուրանի մետաղի վերականգնողական թրծման (ջերմամշակման) կայանքը հասցվել է ատոմակայան:

ԱԷԿ-ը նախապատրաստվում է կայանի շահագործման ժամկետի երկարաձգման ավարտական փուլի աշխատանքներին, որոնք կանցկացվեն 2021 թվականին՝ կիրականացվի ռեակտորի թրծումը, ինչը թույլ կտա 80-85 տոկոսով վերադարձնել այն՝ ելակետային վիճակին:

«Ռոսատոմ» պետկորպորացիայի մամլո ծառայության տեղեկատվությամբ՝ տեխնոլոգիական այդ եզակի գործողությունը կանցկացվի հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի արդիականացման ու շահագործման ժամկետը երկարաձգելու նախագծի շրջանակում:

ԱՐՑԱԽԸ ՆՇԵՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՌՉԿՄԱՆ 29-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Սեպտեմբերի 2-ին Արցախի Հանրապետության անկախության օրն է:

1991 թվականի այս օրը Արցախը հռչակեց իր անկախությունը Խորհրդային Միությունից: Այդ օրը ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ) նախկին ԼՂԻՄ եւ Շահումյանի շրջանի սահմաններում: 1991թ. դեկտեմբերի 10-ին, Խորհրդային Միության պաշտոնական անկումից ընդամենը մի քանի օր առաջ, Լեռնային Ղարաբաղում անցկացվեց հանրաքվե, որի ընթացքում ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը՝ 99,89 տոկոսը, արտահայտվեց Ադրբեջանից լրիվ անկախանալու օգտին: Դրան հետեւած խորհրդարանական ընտրություններում ընտրվեց ԼՂՀ խորհրդարան, որն էլ կազմեց առաջին կառավարությունը:

Անկախության օրվա առիթով Արցախի բնակիչներին շնորհավորական ուղերձներ հղեցին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, նախագահ Արմեն Սարգսյանը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՓՈԽԽՈՍՆԱԿԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՄԵԿՆԵԼ ՅԱՆԿԱՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 4-ին, Հայաստանի Ազգային ժողովի փոխխոսնակ Ալեն Սիմոնյանը հանդիպեց Ռուսաստանի Դաշնություն մեկնելու պահանջով խորհրդարանի դիմաց հավաքված քաղաքացիներին ու պատասխանեց նրանց հարցերին: Հանդիպմանը Ալեն Սիմոնյանը նշեց, որ Ռուսաստան մեկնելու հարցի վերաբերյալ բանակցություններ են ընթանում, եւ արգելքը ռուսական կողմից է:

- Ռուսաստանն ասում է՝ իմ մոտ խնդիր է, համաճարակ է, եթե, նույնիսկ, Հայաստանից ընդունեցի, մյուսներին ինչպե՞ս ասեմ, որ չեմ ընդունելու: Հիմա բանակցում ենք, փորձում ենք չվերթերը վերականգնել,- ասաց Սիմոնյանը:

Անդրադառնալով Վրաստան մուտք գործելու խնդրին՝ Սիմոնյանը նշեց, որ հարեւան պետությունը զբոսաշրջիկների եւ այլ ասելուների համար երկիրը կբացի միայն Վրաստանում կայանալիք համապետական ընտրություններից հետո:

- Հոկտեմբերի 31-ին Վրաստանում խորհրդարանական ընտրություններ են: Մինչեւ դա չանցնի, իրենք երկիրը չեն բացելու,- նշեց Աժ փոխնախագահը:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը Ռուսաստանի Դաշնության հետ շարունակում է աշխատանքները սահմանները երկկողմանի բացելու ուղղությամբ՝ օդային ուղեւորափոխադրումների իրականացմամբ:

ԵՎՐԱՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԾՈՒԿԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 4-ին, Հայաստանի արժեթղթերի կարգավորվող շուկայի պատմության մեջ առաջին անգամ տեղի է ունեցել կորպորատիվ եվրապարտատոմսերի առեւտուր Հայաստանի ֆոնդային բորսայի կորպորատիվ պարտատոմսերի առեւտրային հարթակում (գործարքի ծավալը՝ 600 հազար ԱՄՆ դոլար):

Ինչպես տեղեկացրին Հայաստանի ֆոնդային բորսայից, «Արդշինբանկ» ՓԲԸ-ի եվրապարտատոմսերը (XS2080321198), որոնք միջազգային կապիտալի շուկայում թողարկել է «Դիլիջան ֆայնենս Բ.Վ.» ընկերությունը, ցուցակված են նաեւ Հայաստանի ֆոնդային բորսայում:

300 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով այս եվրապարտատոմսերն ունեն 5 տարի մարման ժամկետ եւ տարեկան 6,5 տոկոս արժեկտրոնային եկամտաբերություն: Արժեթղթի գնման նվազագույն լոտը կազմում է 200000 ԱՄՆ դոլար:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

6.09.2020 Բարեկենդան Սուրբ Խաչի պահոց

Բարեկենդանը պահքին նախորդող կիրակին է, որը նվիրված է տաղավար տոներից Խաչվերացին եւ տեւում է երկուշաբթիից շաբաթ:

8.09.2020 Սուրբ Կույս Մարիամի ծնունդն Աննայից

13.09.2020 Խաչվերաց

ՆՈՐՈՒՅԹ

ԱՆՎՃԱՐ ID-Ն՝ ՄԻԱՅՆ ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ ՉՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ

Վրաստանում անձը հաստատող փաստաթուղթն անվճար տրվում է միայն այն անձանց, ովքեր չունեն կենսաչափական անձնագիր:

Եթե անձն ունի կենսաչափական անձնագիր եւ լրացել է ID-ի ժամկետը, ապա նա պետք է վճարի:

Քաղաքացիների անձը հաստատող վկայականների անվճար տրամադրման ակցիան ընթանում է 2019 թվականից եւ կշարունակվի մինչեւ 2020 թվականի նոյեմբերի 1-ը:

Ակցիայի նպատակն է՝ կատարելագործել ընտրացուցակները, բարելավել գործակալությունների տվյալների բազան եւ քաղաքացիներին տրամադրել ժամանակակից, հուսալի էլեկտրոնային փաստաթուղթ:

ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԲՈԼՈՐԻՆ

Շտապ բժշկական օգնություն - 112
Պարեկային ոստիկանություն - 112
Հրշեջ փրկարար ծառայություն - 112
Հրշեջ փրկարար օպերատիվ ծառայություն - 01, 011, 275-20-85, 241-17-71
Պահակային ոստիկանություն - 125
Գլխավոր տեսչություն - 126
Տեղեկատու բյուրո - 118 08
Քաղաքապետարանի թեժ գիծ - 2-72-22-22
Առողջապահության նախարարության թեժ գիծ - 15-05
ՂազՏրանսԳազ տեղեկատվական ծառայություն - 114, 240-40-04
Գազի վթարային ծառայություն - 04, 274-86-27, 274-89-04
ԹԷԼԱՍԻ թեժ գիծ - 277-99-99
Ջրամատակարարման թեժ գիծ - 293-11-11

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԿԱԽԱ ԿԱԼԱՁԵ. «ՈՒՆԵՆՔ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՄԵՆԱԿԱՆԱՉ ՔԱՂԱՔՆԵՐԻՑ ՄԵԿԸ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԵԾ ՆԵՐՈՒԺ»

Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն սոցիալական ցանցում գրառում է կատարել, որ վերջին երկու տարվա ընթացքում մայրաքաղաքում տնկել են 91 471 ծառ ու թուփ, ինչպես նաեւ՝ ավելի քան մեկ միլիոն տարատեսակ սեզոնային ծաղիկներ:

Թբիլիսիի քաղաքապետի հավաստմամբ՝ այդ ուղղությամբ իրականացված աշխատանքները թույլ են տալիս ենթադրել, որ Թբիլիսին ունի Եվրոպայի ամենականաչ քաղաքներից մեկը դառնալու մեծ ներուժ:

ՀԵՌՈՒՍՏԱԵԹԵՐ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԵԿՈՅԱՆ ԵՎ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԻ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՑ

Հաղորդակցությունների հանձնաժողովը, երեխաներին եւ դեռահասներին վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար, ծնողներին տրամադրում է վտանգների նվազեցման մեխանիզմ:

Հաղորդակցությունների հանձնաժողովի տեղեկությամբ՝ այսօրվանից ծնողները հնարավորություն ունեն դիմել ինտերնետ ծառայություններ մատուցող ընկերություններին, սահմանափակել այնպիսի կայքերը, որոնք վտանգավոր են երեխաների համար:

Հաղորդակցության հանձնաժողովի որոշմամբ՝ սահմանվել է կարգ, ըստ որի՝ այն կայքերում, որտեղ տեղադրված են ֆիլմեր, անիմացիոն ֆիլմեր, սերիալներ, ծրագրեր եւ խաղեր, պարտավոր են տեղադրել հատուկ տարիքային նշաններ, որոնք սահմանված են մինչեւ 18, մինչեւ 15, մինչեւ 12 եւ մինչեւ 7 տարեկան անչափահասների համար:

Հանձնաժողովը կազմելու է երեխաների համար վտանգ պարունակող ինտերնետ կայքերի հատուկ վարկանիշային ցուցակ, որը տեղադրվելու է հաղորդակցությունների հանձնաժողովի կայքում:

Բացի այդ, երեխաներին եւ դեռահասներին վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար, հեռարձակողները պարտավորվում են պլանավորել իրենց սեփական ցանցը այնպես, որ նշված հաղորդումները տեղադրվեն օրվա որոշակի ժամերին: Հեռուստաընկերությունները պարտավոր են մինչեւ 18 տարեկան անչափահասների համար անհամապատասխան ծրագրերը չցուցադրել ժամը 06:00-ից մինչեւ 24:00-ն ընկած ժամանակահատվածում: Մինչեւ 15 տարեկան անչափահասների համար 06:00-ից մինչեւ 23:00-ն, իսկ մինչեւ 12 եւ 7 տարեկանների համար՝ ժամը 06:00-ից մինչեւ 21:00-ն:

Այն դեպքում, եթե նշված պարտավորությունը չի կատարվի, կայքերը կտուգանվեն 1000 լարիով, իսկ օրենքի կրկնակի խախտման դեպքում՝ 3000 լարիով: Հեռուստատեսություններն առաջին անգամ կտուգանվեն 2500 լարիով, իսկ խախտումը կրկնելու դեպքում կդադարեցվի նրանց գործունեությունը:

ՖՈՒՏԲՈԼ

ԹԲԻԼԻՍԻԻ «ԴԻՆԱՄՈ» ԵՎ ԵՐԵՎԱՆԻ «ԱՐԱՐԱՏ-ԱՐՄԵՆԻԱ» ԹԻՄԵՐԸ ՀԱՆԴԵՍ ԿԳԱՆ ԱՅՍ ԱՆԳԱՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԼԻԳԱՅՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի եւ Հայաստանի ֆուտբոլային մրցաշարերի չեմպիոններ Թբիլիսիի «Դինամո» եւ Երեւանի «Արարատ-Արմենիան», Եվրոպայի չեմպիոնների լիգայի առաջին որակավորման փուլում, անհաջող հանդես եկան, համապատասխանաբար, զիջելով ալբանական «Տիրանա» թիմին (0:2) ու կիպրական «Օմոնիային» (:0:1) եւ հիմա ներգրավվեցին Եվրոպայի լիգայի երկրորդ որակավորման փուլին: Այդ փուլում դինամոյականները սեպտեմբերի 17-ին, Ուելսի Ռեկսել քաղաքում, իրենց ուժերը կչափեն տեղի «Քոնազ Քի Նոմեդս» ակումբի հետ, իսկ «Արարատ-Արմենիան»՝ սեփական հարկի տակ, Երեւանի Վազգեն Մանուկյանի անվան հանրապետական մարզադաշտում, նույն օրը կընդունի Լյուքսեմբուրգի «Ֆոլա Էշ» ակումբին:

Հանդիպումն անցկացվելու է առանց հանդիսականների:

ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 4.Լատվիացի: 7.Սարսռալ: 9.Ընդունակությունների զարգացման բարձր աստիճան: 11.Չերքեզի հարեւանը: 12.Վրացի արձակագիր, դրամատուրգ ... Կլդիաշվիլի: 15.Խորհդային ֆուտբոլիստ, դարպասապահ Ռինատ ...: 16.Խեթ, խոլոր: 17.Դռան բախում: 20.Իտալական ավտոմեքենա: 23.Քաղաք Վանա լճի ափին: 24.Նիհար: 25.Լեհաստանի բնակչուհի: 28.Քանոն՝ կոր գծեր քաշելու համար: 29.Թուրք զինվոր: 30.Կատակերգական բեմադրություն «... Կուլպա»: 32.Լատինական այբուբենի տառ: 34.Արկղաձեւ շինվածք՝ կառույց: 37.Թիթեռ (գվռ.): 38.Միջատների խումբ: 39.Անձ, էակ: 40.Հույն պատմիչ եւ աշխարհագրագետ: 43.Քաղաք Կոլումբիայում: 44.Ընկերը՝ իսպաներեն: 45.Վայրի բադ, բադիճոն: 46.Ցավակից:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Անպիտան, վնասատու վայրի խոտ: 2.Ցլամարտիկ: 3.Գրավոր վկայագիր փաստաթուղթ: 4.Քաղաք Անգլիայում: 5.Թույլ, անառողջ: 6.Վրաց մարզիկ, ԽՍՀՄ սպորտի վարպետ ... Կացոբաշվիլի: 8.Լկտի, լիրբ: 10.Հասույթ, եկամուտ: 13.Ես եկա, դու ...: 14.Հայտնագործություն: 17.Գետ Վրաստանում: 18.Հաստատուն: 19.Երկու ծայրերի մեջտեղը գտնվող: 20.Սպայական աստիճան: 21.Չմշակված ադամանդ: 22.Խոսքի մաս: 25.Արտասվել: 26.Հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ազգ: 27.Թավ հոնքեր ունեցող: 28.Երեխայի փոխվող ատամ: 30.Լեռնազանգված, լեռնակույտ: 31.Լեռ պատմական Հայաստանում: 32.Մատակ ձի: 33.Թիկունքին գցվող զգեստ: 35.Լեռ Հայկական լեռնաշխարհում: 36.Թափանցիկ նյութ, որ ստացվում է կվարցի, ավազի եւ մի քանի այլ նյութերի խառնուրդի հալումով եւ քիմիական մշակումով: 41.Անբնակ: 42.Շունչ, ավյուն:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Լալվար: 4.Զանգեզուր: 8.Սանա: 9.Բելգիա: 12.Ռե: 13.Ագապի: 15.Ալաշկերտ: 17.Մահարի: 19.Մոնակո: 20.Վանա: 21.Ներու: 23.Պարասրահ: 27.Ատր: 28.Դինար: 30.Նեպալ: 32.Անեզր: 33.Գիա: 34.Ենի: 35.Մազեպա: 39.Դո: 40.Ներբան: 43.Աղ: 44.Սրահ: 46.Ցինգա: 47.Նրբագեղ: 49.Ին: 50.Գոշ: 51.Նազպար: 52.Թերաճ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Լիբիա: 2.Լալա: 3.Արիա: 4.Զարե: 5.Աներ: 6.Նա: 7.Երգահան: 10.Գլինկա: 11.Աշակերտ: 14.Իրիկուն: 16.Տմարդի: 18.Ան: 19.Մնա: 22.Եզրագիծ: 24.Ռոպե: 25.Սալոմե: 26.Արտահան: 28.Դնեստր: 29.Նարեկացի: 30.Նար: 31.Մարաղա: 36.Ադան: 37.Զոհրապ: 38.Ոստան: 41.Եղեգ: 42.Նինվե: 43.Ագաթա: 45.Սանր: 48.Ղոչ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445